

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1933 - Մայիս - թիվ 5

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

Փեչիկեան Հ. Եղիա. — Արձագանդներ նահատակներու տօնէն և Լուսանորոգի յիշատակէն 193

ՀԱՅԿԱԿԱՆ ՃԵՄԱՐԱՆ

Փեչիկեան Հ. Եղիա. — Հայկական նըշխարներ ու նշմարներ Խաչիոյ մէջ (Ա. Ի Հոռմ 197
Սաֆրաստեան Ա. — Խուրրի աշխարհը և Խուրրիներ 201
Գառգեան Խաչիկ քահանայ. — Քրիստոսի եկեղեցին միայն մէկ է 219

ԳՐԱԿԱՆ

Թումանեան Յ. — Դարամիջի ժամին . 196
Երեմեան Հ. Սիմոն. — Չեօկուրեան Տիգրան 208
Սրապեան Արամայիս. — Ողջերուն ձայնը (Ապրիլեան զոհերուն) 212
Դաւիթեան Յ. — Վարուժան 213
Յովնանեան Հ. Վահան. — Նունուֆարները — Վարդը սափորին մէջ 214
Արսէն Երկար. — Լքուած տաճար — Խորհուրդի ուխտաւոր 215

ԳՐԱԽՕՍԱԿԱՆ

Երեմեան Հ. Սիմոն. — «Ինչպէս վարել արդի կեանքը» — «Երեքդարեան պատմութիւն Ս. Հրեշտակապետ եկեղեցւոյ Պալատու» (գրեց՝ Մելգոն Ածատուր) 216
Քիւրտեան Յ. — «Travels in Persia» (գրեց՝ Thomas Herbert) — «Persian Art» 217

ՀԱՅԿԱԿԱՆ ՄԱՍՈՒԼ

Սարգսեան Հ. Գրիգոր. — «Բամբեր»ին դէմ 234

ԱՅԼԵԻԱՅԼՔ

Բեղլեկիւնոյ. — Քաղաքական տեսութիւն 235
Դաւիթեան Յ. — Ազգայնականութիւն և միջազգայնականութիւն 238
Խմբ. — Մեզմէ անդարձ մեկնողներ (Աւետիք Սահակեան, Օհան Կարօ, Փրոֆ. Յարութիւն Ունճեան) 239
— Հանգիստ հոգւոյ Գերպ. Յ. Գուգեան Եպիսկոպոսի 240

SOMMAIRE

1933 - Mais - numéro 5

p.

Paitchikian P. Elie. — Echos des fêtes de nos martyrs et du Vén. Abbé Mékhithar 193

ACADEMIE ARMENIENNE

Paitchikian P. E. — Mémoires historiques arméniennes en Italie - (I. à Rome) 197
Safrastian A. — Les Khourris. 201
Prêtre Krouzian Khatchig. — « L'Eglise du Christ est une » 219

LITTERATURE

Toumanian H. — A l'heure entre les deux siècles (1901) (poésie) 196
Eremian P. S. — Tchögurian Tigran (A nos martyrs) (poésie). 212
Davidian A. — A Varoujan (poésie) 213
Hovhannessian P. V. — Les Nénufars — La Rose dans le vase 214
Arsen Yergath. — L'église abandonné — Pélerin du mystère (poésie) . 215

RECENSION

Eremian P. S. — «Comment conduire la vie moderne» — «Histoire des trois siècles de l'église St. Archange de Balath» (à Stambul) (par Melcon As-sadour) 216
Kurdian H. — «Travels in Persia» (par Thomas Herbert) — «Persian Art» 217

PRESSE ARMENIENNE

Sarkissian P. G. — Le Christ est-il chrétien? (au journal «Panper») 234

DIVERS

Pellegrino. — Vie internationale . 235
Davidian A. — Le nationalisme et l'internationalisme 238
Réd. — † Avédik Sahakian, Ohan Garo, Prof. A. Oundjian 239
— † Mons. Jean Kouzian Evêque des arméniens-catholiques d'Egypte 240

ՄԱՅԻՍ - ԹԻՒ 5

Բ Ա Ջ Մ Ա Վ Է Պ

Հ Ա Ն Դ Ի Ս Ա Ր Ա Ն

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ - ԳՐԱԿԱՆ - ԳԻՏԱԿԱՆ - ԲԱՐՈՑԱԿԱՆ

1843-1933

ՀԱՏ. ՂԱ. ՌԵԶԲ-ՌԵԶԳ

Վ.ԵՆԵՏԻԿ Ս. ՂԱԶԱՐ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ԱՐՁԱԳԱՆԳՆԵՐ ՆԱՀԱՏԱԿՆԵՐՈՒ ՏՕՆԷՆ

ԼՈՒՍԱՆՈՐՈԳԻ ՅԻՇԱՏԱԿԷՆ

Ի ՋՈՒՐ չէր որ երէկ մեր Նահատակներու տօնը կատարեցինք ազգովին: Յաղթա- նակի հանդէս մը՝ որուն վրայ կու գայ կարծես իր լալկան ստուերը ձգել խորձ եւ անտեղի որակում մը՝ Սգատօն մը, որ ոմանց անգիտակից բերաններէն կ'անցնի նաեւ հայ մամուլին մէջ:

Այդպիսի կոչում մը իսկապէս հակասական է եւ անարժան ամէն կերպով: Եւ հա- կասութիւն այնքան աւելի ցայտուն՝ երբ նկատենք այդ սուգը անոնց համար որոնք արիւնքներն ունեցան մահը դիմագրաւել եւ իրենց անուշ արեւը զոհել յանուն եւ ի փառս իրենց հայրենեան եւ մանաւանդ իրենց քրիստոնէութեան:

Եւ միմէ կարելի է ատկէ աւելի սրբազան դատ մը յղանալ եւ կամ ատկէ սրբա- գոյն նպատակի մը համար նուիրագործել գիտակցաբար իր համակ էութիւնը: Զէ՞ որ հայրենիքի նուիրողը հոգիները ամբողջ ազգին պաշտօնը կը ստանան, դիւցազներ կը կոչուին եւ աստուածացած կը ցուցադրուին որպէս օրինակ՝ բոլոր ցեղին եւ իր սե- րունդներուն: Անուններ զորս կրելը մեծագոյն պարծանք է եւ խման բարձրանալու եւ բարձրացնելու. անուններ փառքով ոսկեծիր հայրենիքի պատմութեան եւ ազգին սրտին մէջ:

Եւ մեր Նահատակները լոկ հայրենիքի համար չէր որ Նահատակուեցան: Եւ անա դիւցազնութեան վրայ սրբութեան լուսապսակ մ'ալ հարկ է աւելցնենք:

Սգալ դիւցազներու եւ սուրբերու մահը՝ որ գերազանց անմահութիւն մ'է, մեղապարտ տգիտութենէ զատ՝ անարգանք մըն է իրենց:

ԲԱԶՄ. ՄԱՅԻՍ 1933

13

